

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նիստի

Մասնակցությամբ՝

Հանձնաժողովի քարտուղարի և անդամների, շահառու հաշմանդամներ ունեցող հասարակական կազմակերպությունների պատասխանատուների:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում իրականացված ծրագրերի և ընթացիկ խնդիրների մասին

(գեկուցող՝ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության հարցերով վարչության պետ Ն. Հարությունյան)

Սույն թվականի հոկտեմբերի 4-ին տեղի ունեցավ հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի հերթական նիստը, որը վարեց ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ, համապատասխան հանձնաժողովի նախագահ Լարիսա Մուրադյանը:

Նիստի օրակարգում ընդգրկված հարցերի շրջանակում քննարկվեցին հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում իրականացվող ծրագրերին, դրանցում առկա բացթողումներին և դրանց հնարավոր լուծումներին վերաբերող մանրամասներ:

Ներկայացվեցին վերջին երեք ամիսների ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային ՀԿ-ների կողմից իրականացված աշխատանքները, արձանագրված հաջողություններն ու առկա խոչընդոտները:

Ոլորտում հանդիպող խնդիրներին օպերատիվ և արդյունավետ լուծում տալու նպատակով հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ համագործակցված աշխատելու պայմանավորվածություն ձեռք բերվեց:

Հանձնաժողովի նախագահ՝

 Լ. Մուրադյան

Արձանագրող՝ Ն. Հարությունյան